

ՊԱՏՄԱՆԻՔ

ՊՈՒԼՏԱՅԻՆ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Հիկու թիւ լեկի ծրարով

Տարեկան . . 14 Ձր.

Վեցամսեայ . . 6 "


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.00 Ձրարով

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրարացման տոնը
20 սակոյի



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԵՂ ՀՐԱՏԱՐԱՆՈՒ Ի ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Redaction du journal
"Ipravounk"
VARNA (Bulgarie)

Редакция
на ВѢСТНИКЪ
„Иравункъ“
ВАРНА (България)

Գրութիւնք եւս
չեն տրոջիր

ՊԱՏՄԱՍՏԱՆ ԶԱՆՔԵՐ

Մինչ արտասահմանի հայ ժողովուրդին մէկ կարեւոր մասը ցնծութեամբ կը տօնէ Հնչակեան երկու հատուածներուն միացումը, մինչ հայ յեղափոխութեան պատմութիւնը շինող այդ կուսակցութեան իրարմէ բաժնուածման դամ. ներքեւ եղբայրական ու զինակցական նոր ուխտով մը Հայրենիքի փրկութեան նուիրական կուռին համար իրենց շարքերը խտացնել կը ջանան, վերջապէս մինչ միութենականը ու չեզոքը բաղձացեալ Միութիւնը իրագործումի ճամբուն մէջ մտած տեսնելով, կը խորհին իրենց ուժերը տրամադրելի ընել «Միութեան պատրաստ» յեղափոխական կազմակերպութեան. անդին հայրենասերի և անձնուէր յեղափոխականի անունը կրող կարգ մը անհատներ պառակտելու, անուանարկելու և դէպի Միութիւն առնուած առաջին քայլն ալ խանգարելու նպատակաւ ամէն միջոցի կը դիմեն:

Այս վերջինները պարզապէս կրտսեր հայ ժողովուրդին «ուժ մի տար միացեալ յեղափոխականներուն», որովհետեւ անոնց այժմու առժամանակեայ վարչներուն մէջ անուանարկութեան կան», ու կը շարեն կարգ մը միտք պղտորող ամբաստանութիւններ, որոնք ատենօք անհասկացողութեամբ իրարու հասցէին նետուած բայց երբէք հաստատութիւն չեն գտած:

Եթէ այդ ամբաստանութեանց մէջ ճշմարտութեան մօտեցող բաներ ալ կային, անկեղծութիւնը կը պահանջէր զանոնք յայտնել Միութեան առաջին հրաւերէն ան. միջապէս յետոյ, և բանակցութեան առաջին պայման դնել ամբաստանութեանց քննութիւնը ու յանցաւորներու դատումը: Եթէ իրենց այս առաջարկը մերժուեր—որ չէր կարելի երեւակայել քանի որ Միութիւն առաջարկողները ամէն բան, անձ, անուն և այլն զոհելու պատրաստ էին—այն ատեն իրաւունք կունենային երեսն հրապարակաւ պառակտել թէ միացողներու զեկա:

վարներուն մէջ ամբաստանեալներ կամ անպատահելիներ կան:

Բայց այս ուղիղ ու բնական ճամբան թողով, երկար ժամանակ լուռութիւն պահել, նոյնիսկ ծուռ-բերան օրհաններով գնահատելի ցոյց տալ վեր. Հնչակեան նոր կեդրոնի ձեռնարկութիւնները, բան մը չըսել նոր անգամներու անձին ու պաշտօնին նկատմամբ, երկար ամիսներով օրօրել Չեզոքէ մը գալիք պատասխանով, և երբ, օրին մէկը, կը տեսնուի թէ Հնչակեան երկու կուսակցութիւններու միջեւ Միութիւնը գոյացած է, երեսն պառակտիչ Յուլիուսը մը հրատարակել չիզողի մը բերնով և յայտարարել «բացէ ի բաց յայտարարում ենք որ մենք դէմ ենք բանակցութիւններ վարելու այդ մէթօտին...» առանց որոշ ըսելու թէ ինչ մէթօտով բանակցիլ օգտակար կը դառնայ:

Եթէ Դաշնակցութիւնը անկեղծ փոփոքող է «Եղափոխական ամբողջական Միութեան», բաւական էր, փոխանակ երկայնապատում և պառակտիչ ոգի կրող վերջին յուլիուսը հայ ժողովուրդին երեսին նետելու, տնոր երրորդ էջին վերջին սա երկու տողը զե. տեղել Դորալի մէկ անկիւնը:

«Կը սպասենք ուրեմն Հնչակեան միացեալ կուսակցութեան կենդրոնի կազմուելուն»:

Այս պարագային ոչ մէկ Հնչակեան կամ չեզոք ու Միութեան կան քննադատելի չը պիտի գըտնէին Արեւմտեան Բիւրօի ընթացքը, և ըստ ամենայնի իրաւունք պիտի տային իրեն այն վերապահումին համար զոր ունեցաւ առժամանակեայ Հնչակեան կեդրոնին հետ ուղղակի բանակցութեան չը մտնելով, քանի որ այս վերջինը ամբողջ կուսակցութեան քուէովը ընտրուած օրինաւոր ու լիազօր մարմին մը չէ եղեր:

Գալով Պ. Միսիթարի կամ Չեզոքի կարգ մը նկատողութեանց էն զլիաւոր կէտին, թէ վեր. Հնչակեան արդի կեդրոնը ապօրինի կազմուած է և այլն. այս խօսքերն ալ իրենց բոլոր արժէքը կը կորսնցնեն երբ վաղը ամբողջ Հնչակեան մասնաճիւղերու քուէ:

ներովը ընտրուի «Միացեալ ու միակ Հնչակեան կուսակցութեան կեդր. վարչութիւնը»:

Հետեւաբար թող ներուի մեզ նկատել տալ թէ Հնչակեան Միութիւնը յայտարարուելէն վերջ, և օրինաւոր կեդրոնի մը ընտրութեան ձեռնարկուելու ատեն, Պ. Միսիթարի վերջին համակը յաւելուածի ձեռով հրատարակել աւելի անմիաբանութիւն սերմանելու, ժողովուրդը խտնեցնելու կը ծառայէր քան թէ բաղձացեալ Միութեան:

Իսկ գալով Միութեան խնդրոյն միջակայ պարագային, եթէ երկու կուսակցութիւններն ալ միմեանց վարչական մարմնաց մէջ աղտոտներ ու կասկածելիներ նշմարեն, պարտին ներքին բանակցութեամբ մը զանոնք գտել, առանց ժողովուրդին մէջ նոր երկպառակութիւններ հրահրելու ընդթ ունեցող գրութիւններ հրատարակելու: Որովհետեւ, աւելորդ է ըսել թէ, այժմ առաւել քան երբեք պէտք կայ յեղափոխական շաղկին մէջ ժողովուրդին թուլացած ջիւղերը կազդուրելու, հայ երիտասարդութիւնը խանդավառելու և հարուստին ու չեզոքին վստահութիւն ներշնչելու:

ԳՈՒՐՈՒՔ

ՍՏՐԿԱՑՈՒՄԸ
ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՇԱՐՔԵՐՈՒ ՄԵԶ

Բռնութեան դէմ, ազատութեան համար մղուած յաղթական կռիւով մը կը սկսի մեր պատմութիւնը և այդ ըմբոստ կռիւը կը շարունակուի ապրիլ, ուժանալ, տիրապետել մեր պատմութեան դողափստ սուռ ընթացքը երբեմն վառուելով բոցավառուելով, երբեմն հրեղէն լեզուներով ֆոֆալով և սպառնալով թշնամի գահին և երբեմն ալ ահաւոր ուժին դէմ հերոսաբար դիմադրելու ընկճուած, մոխիրներու կոյտի մը տակ պահուած ընդմիջ մարած ըլլալու անհնարին պատրանքը տալով թշնամիին. և յետոյ յանկարծ, մոլեխանձ հրա-

բուխի մը պէս լեռներու քաղաթներէն, աւերակներու և մոխրակոյտներու ներքեւէն, ամառութիւններու և անյայտութիւններու խորերէն յանկարծ կրկին ժայթքելով, կրկին ահաւորով պաշարելու, ոտնակոխ ընելու բռնութիւնը և կրկին ողջունելու ազատութիւնը:

Բռնութեան դէմ, ազատութեան համար մղուած մշտական կռիւը վարդաններ ծնաւ. վարդանները վրդովուեցան, գլուխ բարձրացուցին և կռուին մէջ նետուեցան. ազատութեան ոգին առիւծներ դարձաւ զանոնք և երբ իրենց դիցազունի վազքին մէջ մահացու նետը տապալեց զիրենք, անոնց արիւնը օրհնութիւններով և օծումներով սրբազործեց ազատութեան ոգին: Վարդաններու արիւնով ներկուեցաւ Աւարայրը և ամբողջ Հայաստանը Աւարայր մը դարձաւ: Թափուած արիւնէն Գայլ վահաններ ծնան, որոնք ահաւոր մարմնացումներն եղան եռացնող վրէժին: Այնտեղ կռիւներ, արիւնահեղ բարբարոսութեան շրջանի մը վրէժն և ազատութեան երկունքէն ծնած հրկաթէ կուրծքեր. և Դաւիթ-Ֆէկեր, որ պղծուած, ոտնակոխ եղած երկրի մը և ժողովուրդի մը բաղդէն ցնցուելով, ամպրոպներու արհաւիրքով սարսկին ցոփութեան մէջ թաթխուած բռնութիւնը:

Մշտական սխրագործութիւններու ենթակայ այս երկիրը, Հայաստանը, այս երկարամեայ շրջանին մէջ չը զգաց երբէք խաղաղութեան և հանգստի վայելքը:

Բայց և երբէք ստորակ կեանքի վայելքը...

... Ու վերջապէս՝ ալ յոգնած իր անդադրում ճիգերէն և ուժասպառ դարերու ընթացքին մէջ իր կողերէն թափուած արիւնէն, Հայ ժողովուրդը—մեծ մարտիկը և մեծ մարտիրոսը—ինկաւ թուլացած և զգայազիրկ, անփոխ ապագային, որ կը սպասէ զգայազիրկներուն և թուլացածներուն:

Այն ատեն ստրկութիւնը մօտեցաւ անոր և իր մեղի բազուկներով այնպէս պինդ գրկեց զայն, այնպէս կաշկանդեց, որ ան, ու-

ժամպառնակ և զգալի զգիւնք՝ Հայ ժողովուրդը, չունենցաւ կորովը զայն ետ մղելու և տապալելու. տապալելու և կոխկրտելու զայն: Ու յետոյ թմրած այդ կաշկանդումին մէջ, ստրկութեան այդ շնական գիրկընդխառնումին մէջ հետզհետէ ալ աւելի թմրելով, մոռցաւ վերջապէս ամէն բան և հեշտանքով փարեցաւ անոր:

Եւ սկսաւ ստրկացումը...
Բռնակալութեան բարբարոս բանակներու զէմ խրոխտացող հայր սկսաւ դողալ թիւրք բռնաւորի տեսքէն. և որպէս զի ազատ մնայ անոր գազանային մէկ քմահաճութէն, սկսաւ սիրել զայն և... իր վիճակը: «Ստրկութիւնը այն աստիճան կը ստրկացնէ մարդս, կրսէ վճռարկ, մինչեւ որ ան կը սկսի սիրել այդ ստրկութիւնը»: Ու այդպէս ալ եղաւ: Ծանր, երկարատեւ ստրկութիւնը իր կեղտերով խմորեց անոր հոգին, և երբ գգուանքները սկսան կսկիծներու փոխուել, դարաւոր քունի մէջ մեղկացած, վատասեռած հայր, իր քմահաճ և անողոր տարփութիւն վշտացած, աչքը՝ Աստուծոյ դարձուց, իր ցաւերուն փրկութիւնը աղբսելով անկէ:

Ու եկաւ գառն, աղետալի շրջանը մարտիրոսացումին: 1875ի պատերազմին հետեւանքը եղող խժոժութիւնները արին և արտասուք սփռեցին չորս կողմ, բայց չը կրցան ցնցել հայ ժողովուրդը: Եւ սակայն արիւնը և արտասուքը ծնաւ ազատութեան առաքեալները—մարմնացումը դարաւոր տառապանքներու, արիւնի և արտասուքի:

Ու հրաբուխը, որ վաղուց կը սպասուէր անուր կոշկոճանք՝ երուայն խորխորատէն, ուրկէ վայնաւ:

սուններու, ողբերու և գանգատներու խուլ մրմունջները հազիւ կրնային լսելի ըլլալ բռնակալներու անզգամութեան և ժողովուրդնեբու անփութութեան—ժայթքեցաւ վերջապէս:

Հայ ժողովուրդը երգեց, Հայ ժողովուրդը լացաւ, Հայ ժողովուրդը պառագ վերջապէս:

Ու թուեցաւ վայրկեան մը որ ստրկութեան ամէն տեսակ կեղտերով խմորուած, նուաստացած ստրկեր փչրեց վերջապէս իր սիրտն ու հոգին կապկպող շղթան: Եւ սակայն երբ կռուի խանդավառութիւնը անցաւ, երբ կռուողները մեռան և պոռագողները լրանցին և արհաւիրքը զանազան բերկրէն դուրս վտարեց, այն ատեն երեւան եկաւ այն երեւոյթը, զոր կոչակցաւ՝ ինքնազոհութիւնը: Եւ որ ուրիշ քան չէ եթէ ո՛չ ստրկութեան մէկ ուրիշ ձեւը. ստրկութեան մէկ ձեւափոխումը՝ ազգային ազդեցութեան շնորհիւ:

Ստորեւ: Որովհետեւ ուրիշ ինչ անուն կարելի է տալ դասակարգի մը, որ կը բաժարսէ, կանոնադրուէ, կը զրպարտէ և այդ բոլորը հայրենիքի և յեղափոխութեան անունով:

Ստորեւ: Որովհետեւ ուրիշ ինչ պէս կարելի է որակել այդ դասակարգը, որ գործունէութիւն և յեղափոխական գործ կը կոչէ ժողովուրդին մէջ ատելութիւն և մշտական դաւեր սերմանելու ամէն առիթով: Զանք, յեղափոխական գործ—հերոսներու գործունէութեան և անուններու անարգ ու խարդախ շահագործումը և թոյլ կուտայ ինքնիշխան որ ճշմարիտ յեղափոխական գործը, Սերգեյներու և Անդրանիկներու գործը զուրկ մընայ ունէ իսկական օժանդակութեանէ:

Ստորեւ: Որովհետեւ կրնանք մենք ալ ըսել լամբնէին հետ. «Ինչ արժէք, ինչ պատասխանատուութիւն ունի այն մարդը, որ այն պէս կը մտածէ, կը հաւատայ եւ կը գործէ, ինչպէս որ ուրիշները կը թելագորեն իրեն»:

Հերոսներու անունով կոկիտի, խիստ կսկծալի խաղ մը խաղցուած է ժողովուրդին հետ: Եւ ահա այդ դասակարգը, որ գիտէ այդ բանը, որ գիտցաւ այդ բանը, կը շարունակէ ահա հլու գործիքն ըլլալ իր սանթիմներով պարարուող քմահաճութիւններուն:

Դեռ չի տեսնուք մենք զանոնք, իրենց յեղափոխական գիտակցութեան ճամբուն մէջ, թոթափած իրենց հոգին կաշկանդող կուսակցամուստրուկ հակամեծքը և դէպի ճշմարիտ գործն և սրբազան կռիւը:

Դեռ չեսցինք մենք անոնց բերաններէն իրենց թելագործ—մասկարոյծներուն ուղղած այն փրկարար խօսքը, որ իրենց ստրկութեան մեծ բարեշնչումին աւետիսը պիտի ըլլար: Այլ քառակուսի:

Այդ խօսքը ամենէն մեծ քայլը պիտի ըլլար դէպի գիտակցութեան քը և դէպի ճշմարիտ յեղափոխական գործը:

Ամենէն մեծ քայլը, և ամենէն մեծ հայրենասիրութիւնը:
Ա. ՀԱՐՈՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՕՆԱԹԱՆՑԱ, 21 Մայիս

Շ.—Գաղափարացի
Պատկերասրահներ

Քոնստանդնուպոլիսի Շապիւր-Գալահիսարի պանդոկները՝ շար-

թուս, վաթսուս ստորագրութեամբ խնդրագիր մը մատուցած են տեղւոյս Պատ. Թաղ. Խորհրդոյ, պարզելով իրական ա՛յն պատճառները, որոնք արգելք եղած են, 15-20 տարիներէ ի վեր, իրենց հայրենիք չկարողանալ դառնալուն, և որուն մասին՝ Գալահիսարի Առաջնորդ-սրանը 102 կիներու ստորագրութեամբ չեկուցում մը ըրած էր, այս վերջերս, Ազգ. Պատրիարքարան:

Աղբերակները խնդրած են միանգամայն, որ Պատ. Թաղ. Խորհրդը զիմում մը ընէ Ազգ. Պատրիարքարանի, որպէս զի յիշեալ պանդոկներուն երթեւեկութեան անցագրերու մասին գիւրութիւն մը ընծալուի՝ տեղւոյս Հիւպատոսարանի կողմէ: Որը ամենամեծ արգելքն եղած է մինչև ցարդ իրենց երթեւեկութեան:

Թղթակից

ԲԱՐԻՁ, 31 Մայիս

Հայ գեաղուհիներու երկնայրը

Մենք ինչպէս ծանուցել էինք, հինգշաբթի երկնայ տեղի ունեցաւ «Հայ գեաղուհիներու երկնայրը» ի նպատակ հայ որբերուն: Գործակալութեան ոչ ոք այնտեղ ներկայ գտնուելով, դիշխապահ պաշտօնէին պատուէր տրուած էր քիլիֆօնով տեղեկութիւններ խնդրել այդ երկնայրի մասին, որպէս զի ուրբաթ առտու կանուխ հաղորդենք մեր բոլոր թերթներուն: Գիշերուան ժամը տասնեկէսին մեր պաշտօնէին հաղորդած են հետեւեալ տեղեկութիւններն որոց մէջը գտնուող յատուկ անունները մենք չտեղեկութեամբ գրելու ժամանակ անունները ծածկած և բաւական սխալներ սպրդած էին անոնց մէջ—առաջ կը բերենք:

«Հակառակ տեղացած սաստիկ անձրևին հանդիսականներու թիւը 400-450 հոգիի հասեր է՝ երկնայրը սկսեք

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (22)

ԹԻԱՊԱՐՏԸ

ԾԱՄՆ ԱՌԱՋԻՆ

ԴԱՐՁՆԱԼ ՆՈՒԻՐԱԿԱՆ
ԴԱՇՆՅԱՆ ԿԸ ԳՈՐԾԵ

Վերջապէս ատեն էր:

Լուսիս փոքրիկ ու սիրուն ճաշասեղանը պատրաստելէն ետքը, պարտէզն իջաւ եւ սկսաւ նոր բացուած վարդերը զիտել կանացի քնքուչ գրաւուով մը զոր հոգին միայն այդ սեռին բաշխած է առատօրէն:

Իր մեծ հայրը, Վարդան աղա, որ սովորաբար ամեն իրիկուն կանուխ կուգար տունը, այդ օրը պատուիրած էր իրեն թէ քիչ մը ուշ պիտի մնար, որովհետեւ կարեւոր գործ մը պիտի տեսնէր: Այդ պատճառաւ, Լուսիս պարտէզին մէջ ժամանակ անցունելու գնաց:

Ու այդ ընդարձակ ու ծառագարդ պարտէզին մէջ, բաւական չրջագոյն յիշէ ետքը, մտեցաւ ուռնի ծառին

տակ դրուած նստարանին ու անոր վրայ նստեցաւ:

—Սէ, որչափ երջանիկ եմ, մըրմնեց Լուսիս թրթռուն ու գողտր ձայնով մը, որովհետեւ ազատ են իմ սիրելի քոյրերս, ազատ է վանական: Միայն թէ մատուած տո՛ւր որ շուտով վերադառնար վանական, շուտով հոս ըլլա՛ր... Այն, կը կարօտնա՛մ, կը կարօտնա՛մ զինքը: Չեմ գիտեր... չեմ գիտեր... ան իմ սիրտը կրցած է հասկնալ, ան իմ հոգեւոյս մէջ կրցած է թափանցել: Ամեն ատեն կըսէ ինձի թէ կը յիշէ զիս, չմոռնար իմ նուիրական դաշտը ու կուրծքին վրայ կը պահէ:

Այս մտածումներու մէջ թաղուած էր Լուսիս, երբ լսեց որ պարտէզին դուռը կը զարնուէր: Անմիջապէս դռնացի դուռը բանալու: Եկողը պառուցած, դարչնափայ կերպարանքով, ննջաւոր աչքերով, միջնադարի, նիհարակազմ ու ջլթիկ կնի մըն էր:

—Որքան աղջիկս, ըսաւ կնիւր պարտէզի նստարանին վրայ բազմելէ ետքը, եկայ որ քեզի յայտնեմ թէ գեղեցիկ բաղդ մը բերած եմ տունդ, որուն կըստասն ամեն քու հասակն ունեցող աղջիկները:

—Ի՞նչ կըսէք, Տիկին չեմ հասկնար ընդհանրեց Լուսիս տգիտելով:

—Ըսել կուզեմ թէ հարուստ, անհման ու գործունեայ երիտասարդ մը կայ ձեռքիս մէջ: Եւ որովհետեւ այդ երիտասարդը քեզի հաւնէր է...

—Ինչպէ՞ս... գոչեց Լուսիս:

—Ըսել կուզեմ թէ տեսեր է քեզի, շարունակեց պատառ, ատոր համար քու ձեռքդ կը խնդրէ... ահա՛ իր նամակը:

Ու ծոցէն պահաւան մը հանեց ու տուաւ Լուսիսին: Մանկամարդ աղջիկը, առանց ընդունելու, զգուշաբով մը ձեռքը մէկգի թաքտաւ ու ըսաւ.

—Ուսկի՞նչ որ բերեք, Տիկին,

տարե՛ք անոր յանձնեցէ՛ք:

—Ի՞նչ կարողացէ՛ք զայն, աղջիկս:

—Պէտք չունիմ...

Գարշելի պատառը զիւային ժպիտով մը՝ նամակը վերստին ծոցը դրաւ ու մեկնեցաւ:

Գիշերուան ստուերներն իջած էին: Աստղերը կը պնտային անհուն տիեզերքին մէջ ու անուշ սիւք մը ծառերու տերեւներէն սօսաւելով ներշնչանակ յանկերգ մը կը յորինէր:

Լուսիս թողուց պարտէզն ու սենեակը վերադառնալու պատրաստուեցաւ, երբ մարդկային ստուեր մը շնամարեց՝ իրմէն քանի մը քայլ հեռու, որ դէպի իր կեցած տեղը կը յառաջանար:

(Շարունակելի)

ԹԱՏԵՐԱԿԱՆ

ՎԵՍԵՆՆԵՐ ՔՆՆԱԴԱՏՈՂԻՆ

Ինչ մեծ եւ որքան վեհ հանճարի տէր էք, որ ձեր քննադատած նկատողութիւնէն պարտ էինք լռելեան օգտուիլ, եւ այդ ձեր մեծահանճար նկատողութեամբը արուեստը յաւ պէտք էր սորվէինք (.) Դուք կարծեցիք որ թատերական արուեստը պատմայի ֆաթեթաւ է՝ որ ձեզ նման գոյնզգոյն ներկեր ունենայ:

Մարդ քիչ մը կարմրելու է՝ երբ այսօրուան գովածը վաղը պարսաւէ՝ դուք չէիք որ անցեալ տարի 1901 Յունուար 15 եւ 23 թուականաւ ի մասին Վեսէլօ խմբին մեծ մեծ գովեստներ չապրեցիք՝ զո՞ք չէիք Յի Սէ ստորագրութեամբ (իմա այսօր Հրանդ Ժիրայր, գուցէ վաղն ալ Պատիր-այր), պատմայի ֆաթեթայի նման տեսակ տեսակ ստորագրութիւններու ներքեւ յօդաւորագրիր՝ ինչո՞ւ ձեր ստորագրութիւնը կեղծէք, աւելի լաւ չըլլար ձեր իսկական անունը հրապարակէք, որ է Յակոբ Սվաճեան թէզկեանատար մանիֆաթայի: Դուք իբր հրապարակագիր խելքերնուդ փշածը քննադատական է ըսելով կը գրէք: Ինչո՞ւ 15 Յունուարին կը գրէիք այսպէս՝ «Քանի որ խօսքս թատրոնի «վրայ է, յիշեմ նաեւ որ ձմեռը ան-«ցընելու նպատակաւ Վեսէլօ Հայ դե-«րասական խումբը հոս եկած ըլլալով՝ «սկսած է շարք մը ներկայացումներ «տալ, շարք մը առաջ խումբ մը «թատերասէրներու թախանձաբով, «ներկայացուց Յրանսական կեանքէ «(սխալ է Պ. Սվաճեան, Երկու Յիս-«նապետները Իտալական կեանքէ է)»:

«Իրօք խմբին յարգելի անդամները «(ըստ յօդաւորագրին երէկ յարգելի «այսօր անպէտներ) ջանք չէին խնա-«ւած ներկայացումը փայլուն ընե-«լու համար, Տկ. Մարի եւ Տկ. Յա-«կոբեան եւ Պ. Պ. Պապեան, Պէն-«լեան եւ Յակոբեան շատ յաջող գրո-«ւումներ իրենց գերեզման մէջ... «այնպէս հաւատացած ենք որ ինք Տկ. «Յակոբեան Գնարի պակասը պիտի «կրնայ գոցել, Պ. Պ. Պապեան եւ «Յակոբեան իրենց գերեզման տէրը եղան «եւ քանի մը անգամներ ծափահարու-«թիւններ խլեցին հանդիսականնե-«րէն...»:

Կարգալ նաեւ նոյն ամսուն 25 թուա-կանաւ նամակիդ ուս հրաշալի, պան-ծալի կտորը, «Երգեցիկ խումբի ան-«գամները՝ թող ներին ինծի որ ի դի-«մաց իրենց հրապարակաւ շնորհակա-«լութիւն յայտնեմ Վեսէլօ խմբի ազ-«նիւ (այսօր խէնէ, զվզէկ ներկա-«յացումներու գերակատարներ) ան-«գամներուն՝ որոնք սիրայօթար խա-«ղին համար պէտք եղած հագուստ-«ները տուին եւ թոյլատրեցին նոյն-«իսկ յարգելի անդամներէն մէկուն՝ «Պ. Գրիգոր Յակոբեանին» (այսօրուան «անպէտ դերասանին») ներկայացման «Երեկոյին պէտք եղած գործողութիւն-«ներուն վրայ հսկելու. Պ. Գրիգոր «Յակոբեան իր օրինակելի հոգածու-«թեամբը եւ ներկայացման յաջող ըլ-«լալուն համար ըրած անխնայ ջանք-«քերովը, իսկապէս արժանի է յար-«գանքի (եւ անարգանքի) ու պատիւ «կը բերէ թէ իրեն եւ թէ իր պատկա-«ւած խմբին»:

Այս գովեստի բառերը դուք չը գրեցիք Պ. Սվաճեան. տարի մը առաջ Պ. Յակոբեանը իբր լաւ դեր կատա-րող կը գովէիք եւ այսօր կեղծէք Պ. Գրիգոր Յակոբեան անճոռնի դիմա-

գծեր չինէ, ծիծաղելի չարժուիներ, բերանը թուրով լեցուն խօսիլ եւ կա-կազմներ ունի ըսելով կը պարսա-ւէք: Ուրեմն քանի որ Պ. Յակոբեան անճոռնի դիմագծեր կը չինէ, կը հարցնենք ձեզ Պ. Սվաճեան, ինչո՞ւ անցեալ տարի «Առումն Անիի» արա-մին մէջ ձեր դէմքը Պ. Յակոբեանի յանձնեցիք, որպէս զի վաշեղէն կեր-պով Պարսիկ թագաւորի գէմքը յօրի-նէր, որ այն ատեն ձեր յիշաւի խոպտ եւ չարքալ ձայնովը միծապէս փայլեցաք: Ինչո՞ւ Երեկոյն գովեստ չոստոված Պ. Պապեանին կեղծէք սիրտ խառնող դերասան կանուանէք: Նաեւ դուք կը խոստովանիք Պ. Պէնլեանի իր գովելի դերին մէջ եղական ըլլալը, այսօր ալ կեղծէք բեմական արատ կանուանէք աշուղաբար: Այս չէ սիթէ ձեր նկատողութիւնը, ասոր կըսեն թքածը լղել:

Մենք լաւ գիտենք թէ մեզ ինչո՞ւ կը թշնամանէք. որովհետեւ անցեալ տարի ազգասիրաբար Ձրի թատրոն մոնալով ի հանոյս դերասանաց ստիպեալ էիք գովեստներ չապրել, եւ ուրովհետեւ այս տարի ձեր Ձրի մուտքը խմբին կողմսնէ անընդունելի որոշ-ուեցաւ, դուք կատաղած ամենավե-հանճարաւ խումբը թշնամանելու ե-լաք. դուք կը նմանիք Յիլիպէի այն երկար մայրի ճառերուն որ հովը որ կողմ փչէ այն կողմը, անոր նման շուշանիդ կը ծռէք: Այսպիսի մարդոց Պ. Սվաճեան պնակալէզ կըսեն. դուք ձեր մէթոքին սանդիմներուն հաշիւը նախ կարգադրեցէք որ յաճախողները չը խաբէք, եւ վերջը թատերական գործերու խառնուեցէք: Գուք ձեր այդ գովելի վարմունքովը գոմէտի նիւթ մը մատակարարեցիք որ յառաջիկային Յիլիպէի մէջ ձեր հեռատես (.) աչաց առջւալ պիտի ներկայացնենք ձեր պար-գած մեծահանճար նկատողութեամբը, եւ այն ատեն հարկաւ դուք ալ գոհ պիտի ըլլաք մեր այս ընթացքէն: Լաւ չըլլա՞ր. ասի քեզ մեր վերջին ապ-տակը թող ըլլայ:

Դերասան մը

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Այն ժամակ մէջ փրկիպոսեան կոչուած աղանդէ մը ժողովուրդը զգուշացնելու համար կրօն. ժողո-վոյ որոշմամբ Պատրիարքը կոն-դակ մը զրկած էր: Այժմ Այն-թապէն կը զեկուցանեն թէ փր-կիպոսեան անուն նոր աղանդ մը երբէք գոյութիւն ունեցած չէ, այլ մի քանի երիտասարդներ ի-րենց գլուխ ունենալով փրկիպոսեան էֆէնտը Ստրգսեան անուն անձ մը, տեղւոյն հայ եկեղեցւոյն մէջ համախմբուելով, ժողովուրդեան բա-րոյական մակարդակը բարձրացնող խրատներ կը խօսին: Այս տեղե-կութեանց վրայ Պատրիարքը նա-մակաւ մը յորդորած է իշխալ փր-կիպոս անուն անձը շարունակել իրենց բարոյական դասաւթօսու-թիւնները «ըստ Եկեղեցւոյ կար-գաց եւ կանոնաց»:

— Պուրկազի Տ. Գարեգին քա-հանախ եկեղեցականութեան բոլո-րովին հակառակ ընթացքի մէջ գտնուելուն համար—ինչ որ նոյն քաղաքէն թղթակից մը մեզ հա-ղորդած էր—բողոքագիր մը զըր-

կուեր է Պատրիարքարան, յայտա-բարոյ որ հիթէ Ազգ. վարչութիւնը չը պատժէ այս քահանան դատա-րան պիտի դիմուի:

— Հայրենիք մէջ կը կարգանք թէ տեղւոյս կիսաշարաթաթերթին առժանակեալ խմբագիր և մնացուն աշխատակից Լեւոն Սարգիսեանը՝ ծանօթ մատնութեան պատճառաւ, Պուրկարիոյ Դաշնակցականները ան-միջապէս (.) արտաքսած են իրենց մէջէն: Եթէ ստոյգ է այս լուրը, կը յուսանք թէ մաքրագործումի ժամանակը հասած ըլլայ, և ու-րիշ աղտոտներ ալ արտաքսուին հեռագծեալ, ու Դաշնակցութեան դռները գոցուին կարգ մը աքէի ցփէիներու առջեւ, որոնք զանի Արշակաւան կարծելով ներս կը սպրդին:

— Տամասկոսի (Եւֆրատ) մէջ մըզ-կիթի վերածուած վանքէ մը վեր-ջերս գտնուած հին ձեռագիրներուն մէջ Հայերէններ ալ կան հղեր, զորս Սուլթանը Գերմանիոյ կայ-սեր զրկած է:

— Պոլսոյ Հայ վարժարաններու տեղեկագիրներու ամփոփումէն կը տեսնուի թէ այժմ Հայերը այդ մայրաքաղաքի մէջ ունին 40 վար-ժարան 5,376 աշակերտներով եւ 298 վստապետ եւ վարժուհիներով:

— Կեսսրիայէ Լ'Առմենիի կը գրեն թէ Թուրքաց վայրագութիւն-ները հայոց դէմ այն աստիճան ա-ւելցած են, որ ասոնք ստիպուած են իրիկուան մուլթը սկսելուն պէս ի-րենց տունները քաշուիլ և մինչեւ առաւօտ դուրս չելնել: Քանի մը առաջնակարգ եւ տարիքոտ հայեր այցելութեան համար գիշերը դուրս ելնել համարձակելով, կալանաւոր-ուած են թուրքերէ եւ... բռնա-բարուած փողոցին մէջ:

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ՆՈՐ ԵՐԴՐԱՐԱՆ ԿԱՄ ՄՐՄՈՒՋ ՀԱԹ-ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. անգամ տպագրուելով աւելի ճոխացած ու բա-րեփոխուած է, եւ հակառակ գնոյն աժանութեանը կը պարունակէ ազ-գային հին եւ նոր խիստ շատ եր-գեր:

Գին 1 Ֆր.

ՆԵՏԱ ԿԱՄ ՄՐՄՈՒՍ ՊԱՏՄԱՄԸ, Պուրկարիոյ ազատութիւնէն առաջ Պուրկար գիւղացիին Թուրքերէ կը-րած տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ: Շատ հե-տաքրքրական:

Գին 50 ՍԱՆԹ.

ՀԱՅՐԵՆԻԻԻ ԶՈՀՆՐ: Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն, գրեց Դ. Նահապետեան:

Զեղչեալ Գին 1 Ֆր.

Այս գիրքերը ստանալու համար պէտք է գիմել Իրաւունքի խմբագրու-թեան, բոսթի ծախքը 10ական սանթիմ միատեղ զրկելով. իսկ գիր-քերու արժէքին համար, եթէ ուրիշ զիւրութիւններ պակսին, կընդունուի նամակագրօշմ 10 0/0 զեղչով:

է ֆրանսացիի մը՝ Պ. Գարբիէլ Մուրէի մէկ բանախօսութեամբը, այդ բանա-խօսութեան խորագիրն է եղեր «Հայ բանաստեղծութիւնը եւ գեղարուես-տը»: Բանախօսութեան ժամանակ մո-գական լապտերներով ցոյց տրուած են հայկական ճարտարապետութիւնը ներ-կայացնող զանազան նկարներ եւ տե-սարաններ:

Բանախօսութենէն յետոյ տեղի ու-նեցեր է իսկական երեկոյթ—կոնցերտը, որուն մասնակցած են—մեզ հաղոր-դուած անուններէն—Տիկին Սըկոն Վէպէր՝ ֆրանսական թատրոնէն, Տիկին Տէլվէն՝ նոյնպէս ֆրանսական թատրոնէն, Օրիորդ Փալադարա՝ ա-զատ երգչուհի, իսկ արական սեռի արդիստներէն՝ Պ. Պ. Ֆիլիպ Կառնիէ՝ ֆրանսական թատրոնէն, Ռամօ Օտէո-նէն, Ամիրեան՝ հայ երգիչ, Կոնկուառ Կիւպէնիկ՝ հայ գերասան:

Վերջին մասին մէջ երգուած են հայերէն ժողովրդական երգեր, ար-տասանուած են հայերէն հին ու նոր բանաստեղծութիւններ, որոց շատե-րուն ֆրանսերէն թարգմանութիւնն ալ կարդացուեց է:

Երեկոյթը տրուած էր, ինչպէս ը-սինք, Յրանսական Ակադեմիայի ան-դամ Պ. Էոնէսդ Լափիսի եւ Բարիդի երեսփոխաններէն հայասէր Պառն Տրնի Գօշէնի հովանաւորութեան տակ: Թե-լեֆօնը մեր պաշտօնէին իմացուց որ թէպէտ Պ. Տրնի Գօշէն եկեր է երե-կոյթին—պէտք է խոստովանիլ որ այս ծնունդով, պաշտօնով, հարս-տութեամբ, համբաւով, վերջապէս ամենայն տեսակէտով բարձր անձնա-ւորութիւնը միշտ կատարած է երբ բան մը խոստացած է—բայց Պ. Էո-նէսդ Լափիս ակադեմիականը չէ եկած, սակայն իւր կրնը՝ Տիկին Էրնէսդ Լա-վիս հանդիսականներուն մէջն է եղեր:

Հարցում է, —միշտ քիչեփօնով— թէ յայտնի ինչ մարդիկներ կան ներ-կայներուն մէջ, պատասխանուած է, —Ամբողջ հայ գաղթականութիւնը(այս մեզ քիչ մը չափազանցուած կերեւի որովհետեւ յայտնի է թէ Բարիդի հայ գաղթականութիւնը բաղկացած է, կըր թուով, հազար անդամներէ, մինչ երեկոյթի մէջ 450-500 հոգի կայ եղեր, այդ «կամ ամբողջ գաղթակա-նութիւնը» բառը սխալ հասկցուած է եւ կամ Յրանսացիներ չեն եղեր բեւի է), Յրանսացիներու մէջէն աչքի իյ-նող անձնաւորութիւններէն յիշուած է՝ Պ. Պ. Մէյլէ՝ բրօֆէսօր հայերէն լեզուի Արեւելեան լեզուներու վարժա-րանին մէջ եւ յաջորդ հանգուցեալ Դառնիէի, Օպոնի՝ երաժշտագէտ մը որ հայերէն երաժշտութեամբ կը զբաղի մասնաւոր կերպով: Կային անշուշտ ուրիշ Յրանսացիներ, բայց անոնք մեզ համար մեծ կարեւորութիւն մը չունին, վասն զի մեզ Հայերուս դեռ ծանօթ չեն իրենց հայասիրութեամբ կամ հայանպաստութեամբ:

Մեր կողմնակի կերպով հաւաքած տեղեկութիւններուն համեմատ երե-կոյթին գլխաւոր կազմակերպիչն է եղեր՝ «Անանիս» հանդէսի խմբագիր Պ. Արշակ Զօպանեան: Որչափ կը յիշենք, յիշեալ պարոնը, իբրեւ երեք տարի ա-ռաջ, համանման այսինքն մեր որբե-րուն ի նպատակ ցերեկոյթ մը կազմա-կերպեց, որու մասին մենք ժամա-նակին խօսեցանք, այն ցերեկոյթէն բաւականին մեծ գումար մը մտաւ որ-բերուն գանձանակը: այս երեկոյթէն ինչ հասոյթ գոյացաւ, կամ գոյանա-լու է, այդ մեզ կիսացնէ ապագան: Մենք կը ցանկանք որ գումարը մեծ, խիստ մեծ լինի, քանի որ խնդիրը մեր որբերու շուրջը կը դառնայ...:

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐՔԻԱ

Ֆիրմիլեան մէտէլտինտէն տօլա-
յը Բուս էլլիսի Մ. Չինովիկին է-
լան Սթանպօլտա գալուպ՝ հօճը-
լըզընը թէէխիւր իթտիկի թաւնա
պիտիւրիւրէրէ, օնա մուգապիւ
Պուկարարուն տախի Մ'ակէթոնիա
իչինն եէնի իքի տէսթօթա պէրաթ-
լարը իսթէտիգլէրի իլալէ իտիլի-
յօր:

— Ալմանեա էլլիսի Մ. Բուվի-
էնին Տիւլունը Ումուսիյէ իչինն
թանգիմ իթմիշ օլտըզը ճէտվէլին
գապուլ ու թաստիգ օլընմաւընը
Սուլթանտան թալէպ իթմիշ տիր:
Սուլթան պու պապտէ հիւսնի թի-
լա կէօսթէրուպ, մէսէլէնին թէտ-
զըզը իչինն Սատրազամա էմիր ի-
տէճէլինի պէյան իթմիշ տիր:

— Սթանպօլտան Ֆրանգֆորթէր
Յայրոնկա պիտիւրիլմիշ տիր:

«Ֆրանսանըն իտտասար իւզրէ
թային ու թաստիգ օլընմաւ Քիւ-
տանիլէրին բաթրիգի էմանուէլ
Մուսուլտան կէլտի. թիւրք հիւ-
քիւմէթինին թէգիթգաթը սէտէպի
իլէ մուսաիլէյհին օրատա եաշա-
մասը միւշքիւլ օլմուշ ըտը: Ֆրան-
սա էլլիսի իլէ կէօրիւշմէմէսի ի-
չինն մուսաիլէյհի իքի կիւն Եր-
տըզ Քէօշիւնտէ թէվգըթ իթտի-
լէր»:

— Հիւսազտա պիր չըմէնտըֆէր
խաթթը եարմագ իչինն զըրաթ
պանգասընըն թէմինի իլէ՝ պիր
միլիոն լիրա իսթիգրազ ալընմա-
սընա Սուլթան գարար վէրմիշ
տիր:

— Սէլիմ Մէլհամէ բաշանըն
Մալիյէ նազըրը թային օլընա-
նազը միւշքիւլ տիր:

— Սթանպօլտան եազըյօլլար:
«Թէվգըթաթ տէվամ իթտիկի
կիպի, պիր թարաֆտան սիւր-
կիւնէ եօլլանըլլօլլար: Սօն տէֆա
իւշ գապիթ, պիրի միւրալայ Եէ-
մէնէ կէօմտէրիլտիլէր. անլէրէ իս-
նաթ օլընմաւ ճիւրմ եա սուրի գասթ,
եա միւզիւր լիսան վէ եախօտ խա-
րիճ իլէ մուսապէրէտէ պուլընմը
օլմագտան իպարէթ տիր»:

«Տիկէր թօհաֆ պիր թէվգըթ
տահա վուգու պուլտը: Սուլթան
Ապտիւլ Ազիզ տէվրինտէ նէզա-
րէթտէ պուլընմաւ միւթէվէֆա
Քեհաթիլ բաշանըն 70 եաշընտա
տուլ զէվէսի խատիմէ հանըմ
տէրտէսթ օլընտը: Պու ճէսուր
գատըն Պէպէթտէքի գօնաղընտա
պազը քէնտի տօսիլարընը տա-
վէթ իտուպ զիյաֆէթ քէշիտէ իթ-
մէք թէօհմէթինտէ (.) պուլընմը:
Պու սէպէպլէ մէզպուրէյէ ալա
մէյտան վէրմէքսիլին, ճէպրէն
վաբօրա գօյուպ Մըսըրա սիւր-
տիլէր»:

ՏԱԽԻԼԻՅԷ

Ֆէխամէթլու Բրէնս հազրէթ-
լէրի ալաֆրանկա Յունիս շտէ Սօ-
ֆիատան էպէնթալա հարէքէի

իթմիշ տիր. օրատան տախի Յու-
նիս 10 տա Բէթրսպուրկա կիտէ-
ճէքլէր տիր:

— Մ'էսմուլթա կէօրէ, Բրէն-
սին սօն էմրի իւզրէ, Մ. Տանէվ
Սօպրանիլի թէէխիւր իթմէմէք ի-
չինն Բէթրսպուրկա կիթմէյէճէք
իթմիշ:

— Հէր պիր ֆիրգայա մէնսուպ
զէվաթտան միւթէյէքիլ վէ 100
քիշիտէն իպարէթ պիր հէյէթի
մէպուսէ՝ սապըզ վիւքէլտան Մ.
Վազօլըն վէ Մ. Կէշէվին թիյաւս-
թի իլէ, օգոստոստա Մ'օսկուլալա
վէ Բէթրսպուրկա կիտուպ, Պու-
կարիյա սէրպէստիլէթ վէրէն
մուհարէպէնին սէնէի տէվրիլէսի
օլմագ մինասիպէթի իլէ, Բուս
միլլէթինէ պէյանի թէշէքիւրաթ
իտէճէք վէ իքիճի Ալէքսանդր
Չարըն նաթընա եարլաւաթ օլան
հէյէթին թէսմի քիւշաթընտա հա-
զըր պուլընմագ իչինն Բուս էհա-
լիսինի Սօֆիայա տալէթ իտէճէք
տիր:

ՊՕԷՐԼԷՐ

Սուշի շաքիւր

Ինկիլիզ բարլըմանընտա պիւ-
թինն մէճիւս ազալարըն վէ հա-
զըրլարըն հազըր պուլընաղլարը
հալտէ սուլ հանամէսի սուրէթի
մուլթանթանտէ օգոնտը:

Ահանամէնին պաշընա շարթ-
լարը շունլար տըր:

1. «Պօէրլէր պիւլա թէէխիւր
թէրքի սիլահ իտուպ, սիլահա-
րըն վէ ալէաթ ու լէվազիմաթը
հարպիլէրինի թէսլիմ իտէճէք-
լէր:

2. Պօէրլէր գրալ էտուարտը
քէնտիլէրինէ հիւքիւմտար թանը-
յաճագլար:

3. Սապըզ Օրանթ վէ Թրանս-
վալ ճուհուրիլէրին խարիճէ
կիթմիշ օլան թապաւարը վէ մու-
հարէպէտէն տօլայը մահպուս վէ
եէսիւր օլանլար թէքրար վաթան-
լարընա եօլլանրուպ, անլէրին էմ-
լաք ու էշեալաշը իտտէ օլընաճագ
տըր:

4. Հօլանտէզ լիսանը մէքթէպ-
լէրտէ թէտրիս օլընաճագ:

5. Պօէրլէր մուհաֆազաի նէֆս
իչինն սիլահ թաշըմայա մէզուս
պուլընաճագլար:

6. Խտարէի ասքէրիլէ՝ միւմքին
օլտըզը գատար չապուզ գալգա-
ճագ:

7. Պօէրլէր օթօնօլի իտարէսի
վէրիլէճէք:

8. Պիր գօմիսիօն թէշէքիլի իլէ
եէրիլէրին չիֆիլթիլէրի եէնիտէն
թանգիմ վէ ինչա օլընաճագ:
Պուլար իչինն ինկիլթէրա թէշի-
նէն ազճէ թէտիլէ իտէճէք:

9. Ասըլար ինթիլապաթա իշ-
թիւրաթ իտէմէյէճէքլէր: Ինկիլիզ
թապատը օլուպտէ, ինկիլթէ-
րայա գարըն մուհարէպէտէ պու-
լընալար մուհարէպէտէ ալթընա ու-
լընաճագլար»:

Պաշընա պու շարթլարլէ թան:

զիմ օլընմաւ սուլ հանամէսիին
իմզալանտըզտան սօնրա Պօէր
րուհալարը Բրէթօրիտան չը-
գուպ ասքէրլէրինի տաղըտմայա
կիթմիշլէր:

Պիւթին Լօնտրա կազէթալարը
իշպու ահանամէլի բէսէնտ իլի-
մէքլէ, Լօրտ Քիշէրլ վէ Չէն-
պրլէնէ մէտհ ու սէնալար օգու-
մագտա տըրլար: Տիւնեանըն հէր
պիր թարաֆընտան գրալ էտուար-
տա թէպրիգ թէլէկրաֆարը քէ
չիտէ օլընմը տըր:

— Ինկիլթէրա մէճիւսի մէպու-
սանը Լօրտ Քիշէրլէ 50,000 լիրա
պալաշիշ վէրիլմէսինի 24 սէսէ
գարըն 370 սէսլէ թասթը գա-
րարա ալտը:

Պու էսնտէ իրլանտալը պիր
մէպուս «Քիշէր գատընլարա վէ
չօճուգլարա գարըն մուհարէպէ
իթտի» տէմէսի իւզէրինէ, եինէ
Նուլթընա տէվամ իթմէսինտէն
մէնն օլընտը:

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսա վիւքէլա ըլլիսի Մ.
Վալտէք-Բուս գապիլիլէնին իս-
թիֆասընը Մ. Լուպէյէ թագ-
տիմ իթմիշ տիր: Մ. Լուպէ պու-
իսթիֆատան տօլայը պէյանը թէէ-
սուֆլէ, Վալտէք-Բուս գապիլիլէ-
սինին վսթանա հիւսնի խըտէ-
թինտէն նաշի թէշէքիւրաթընը
պէյան էլլէմիշ տիր:

Բէվալթէ կէօրէ՝ եէնի գապի-
նէնին թէշէքիլի եա Մ. Պրիսուս
վէ եախօտ Մ. Գօպա իհալէ ի-
տիլէճիւր, խարիճի նազըրը Մ.
Տէլլուսէ վէ պահրիլէ նազըրը Մ.
Լանէսան թէքրար մէպլէրլին-
տէ իպգա օլընաճագլար:

ԱԼՄԱՆԻԱ

Աճէմ Շահը քիմալը թալթիլէ
Պէրլինտէ գապուլ օլընմը վէ մու-
լթանթան պիր վիյաֆէթտէ պու-
լընարագ, Ալման իմքէրաթօրըն
վէ միլլէթին էօմր ու իգպալընա
իտարէի ագտահ իթմիշ տիր:

Շահըն էվէլլէրի կիւն Պէրլին-
տէն մուֆարէքէթ իթտիկիին թէ-
լէկրաֆ պիտիւրիլ տիր:

— Ալմանիանըն Բալիւշթալը
նէպատաթ (արմտիք ու բուսէլէն)
իչինն հիւքիւմէթին թէրթիպ իթ-
տիկի կէօմրիւք թարիֆէսիսի գա-
պուլ իթտի:

ԳԵՐՄԱՆԻԱ

Լէհլէրին Բրուսիտա կիւնպէ
կիւն արթմագտա օլտըզլարը Ալ-
ման հիւքիւմէթինի բահաթօրը
իթմէքտէ տիր: Գօնթ Պիւլով սօն
պիր նուլթընտա «Լէհլէր չազալ-
լար կիպի չօգ վէ չապուգ արթ-
մագտա տըրլար» տէմիշ օլմասըն-
տան տօլայը, Ալման կազէթալար
նազըրըն պու քէլաթըն իսթիհա
իտէրէք, շու տարը մէտէնիլէթտէ
պիր միլլէթին արթմասընա գարըն
մանիլէր չըգարըլմագ տէյօրլար:

ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

«Վէսէլլօ» Հայ դերասանական խումբը
պիտի ներկայացնէ այս երեկոյ ժամը
9ին առաջին անգամ ըլլալով «Ռօպէրթ
աւազակապետ կամ Անիկոյ թեան
պաշտպանը» թատերախաղը 4 արար:
Երգ եւ պար Օր. Բօզալի եւ Պ. Գ.
Յակոբեանի կողմանէ:

«Թուհաւոր գաւաթը» Միծաղաշարժ
գաւաթ 3 արար Պ. Պէնլեանի կողմէ:

Վաղը, կիրակի գիշեր, պիտի
ներկայացնէ «50 հազար ֆրանքի
փոխանակագիրը» տրամ-գօմէտի 5 ա-
րար:

Երգ եւ պար ՊԱՐ:

Խիստ ծիծաղաշարժ գաւաթ մը:

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ

ՀԱՅԻ ԲԱՆԱՔՈՒ

«Վառիլթէ» դերասանական խումբը
այս գիշեր առաջին անգամ ըլլալով
պիտի ներկայացնէ Արիլիա բանտօ-
միմ 6 արար:

ԲԱՆԱՔԱՆՎ ՀԱՅՐ Խիստ ծի-
ծաղաշարժ գօմէտի 3 արար:

Վաղը, կիրակի գիշեր, պիտի ներ-
կայացուի ՆԱԲՕԼԷՅՈՆ ՊՕՆԱԲԱՐԹ կամ
ՌՄԲԱԿՈՆՏԻՆԻՆԻՆԸ բանտօմիմ 6 ա-
րար:

ԴՊԻՇ ԱՂԱՅԻՆ ՀԱՐՍ ԸԼԼԱԼԸ գօ-
մէտի 3 արար:

Երգեր եւ պարեր:

Վառիլթէ խումբ

ՄՕՏԵՐՍ ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍԷԷ

Ֆրանսայի նշանաւոր վիպասաններէն
ՌԷՆԷ ՔԸ ԲՕՆ-ՄԷԻ

Հեղինակութիւնը եղող

ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

անուն խիստ հետաքրքրաշարժ եւ
բարոյալից վէպը:

Աման գատակորդի դերամոնտէլի ըլլալու հա-
մար, զիջըր մոստոմաւ, Ցակուն երեւոյթի բազ-
կացեալ, շարաթը երկու թերթ պիտի հրա-
տարակուի եւ իւրաքանչիւր Ցակուն երեւոյ պիտի
ծախուի

5 սանթիմի:

Ար-ԷԼԷԻԷ 24-25 Բերլէր Ղեմ Բ-ԷԼԷԷ:
Վառնայի համար բաժանադրալիմ 1 Գր.
Ուրիօ Բաղաֆնիւր եւ առաստաղմանի հա-
մար 1.20:

Վառնայէ դուրս, Պուկարիլի համար երեք
թերթ մէկ ծրարով կը զրկուին. իսկ արատա-
տահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով մէջ.
փոսթի ծախքը հրատարակչին վրայ է:

Փափաքողք պէտք է դիմեն հետեւեալ հասցէին:

ԱՐԵԻԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՕՆԷՆԻ ԲԱՐՍԷՂԵԱՆԻ

ՎԱՌՆԱ

Գրամի փոխադէմ նամակադրոս ալ կընդունուի

Յ. Կ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ

Թանգալատար

Պատիւ ունիմ պատ. ազ-
գայնոց յայտարարելու թէ՛ Վառնայի,
Շուսիլի եւ Ռուսիոյ մէջ յանձնա-
կատարութեան երթեւեկութեան սկսած
եմ, անպայման վստահութիւն, ապա-
րանքներու գիները խիստ զիւրաժատ-
չելի եւ յանձնարարութիւնները պիտի
կատարուին արագ եւ շատ ճշգրտութեամբ:
Հասցէ՝

Յ. Կ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ

Վառնա

Իսկ Ռուսիոյ մէջ կեդրոնատեղին է
Գալֆաեան եղբարց խանութը:

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна